**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ**
**ՄԱՐԶՊԵՏ**

*<<07>> << փետրվար >> 2017 թ*  N 28
*ք. Եղեգնաձոր*

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԵԼԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀՀ <<ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1)-ին կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16 կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 18.1, 28.1 և 34-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, միջազգային ինտեգրման և բարեփոխումների նախարարի 2017 թվականի փետրվարի 6-ի 01/01.4/334-17 համձնարարականը.

*ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ*

1.2017 թվականի փետրվարի 7-ից Նելլի Հարությունյանին նշանակել ՀՀ <<Վայոց ձորի մարզի Եղեգիսի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 /հինգ/ տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը, կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել հանձման-ընդունման աշխատանքները:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ